ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 42

«25» 09 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 117 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության կողմից նյութերի նախապատրաստման և դրա վարույթում գտնվող քրեական գործերով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև նշված նյութերի և քրեական գործերի կապակցությամբ դատախազական մյուս գործառույթների իրականացումը լիազորելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 7-րդ կետերով ու 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. **Լիազորել՝**

1) **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի**

օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետին, նրա տեղակալներին, վարչության ավագ դատախազներին ու դատախազներին՝ հսկողություն իրականացնելու Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության կողմից նյութերի նախապատրաստման և վարույթում գտնվող քրեական գործերով նախաքննության օրինականության նկատմամբ, ինչպես նաև նշված նյութերի և քրեական գործերի կապակցությամբ իրականացնելու դատախազական մյուս լիազորությունները.

2) **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին (դատախազներին)՝** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հանձնարարությամբ հսկողություն իրականացնելու Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության կողմից նյութերի նախապատրաստման և վարույթում գտնվող քրեական գործերով նախաքննության օրինականության նկատմամբ, ինչպես նաև նշված նյութերի և քրեական գործերի կապակցությամբ իրականացնելու դատախազական մյուս լիազորությունները:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանմանն ու ավագ դատախազներին (դատախազներին) լիազորելու մասին» N 117 հրամանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ